



ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամը՝ Եվրոպական միության և ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության հետ համատեղ, «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագրի շրջանակներում հրավիրում է բոլոր ՄԿՄՆԱԿՆԵՐԻՆ, ովքեր ցանկանում են հիմնել իրենց սեփական բիզնեսը, կամ ԳՈՐԾՈՂ ՓՄՁ-ներին, որոնք վերջին երեք տարիներին արդեն զբաղվում են ձեռնարկատիրական գործունեությամբ, մասնակցել Լոռու մարզի Վանաձոր քաղաքում մեկնարկող «Հաջող սկիզբ» ծրագրին:

Ծրագիրը ներառում է ուսուցողական, տեղեկատվական, մասնագիտական խորհրդատվության և ֆինանսական աջակցության տրամադրման բաղադրիչներ:

Մասնակցելով ծրագրին՝ սկսնակ և գործող ՓՄՁ-ները կբարելավեն իրենց ձեռնարկատիրական հմտությունները և կստանան շուկայավարման, կառավարման, արտադրության և ֆինանսների պլանավորման գիտելիքներ և համապատասխան գործարար հմտություններ:

Ծրագրի ընթացքում փորձառու մասնագետների ուղղորդմամբ սկսնակ գործարարները նախ մշակում են իրենց անհատական գործարար ծրագիրը, որից հետո ձեռնամուխ են լինում դրա իրականացմանը:

Ծրագրի թիրախային ոլորտներն են՝ սննդի վերամշակում և զբոսաշրջություն:

Լավագույն գնահատականի արժանացած կենսունակ և իրատեսական գործարար ծրագրերը կարող են հավակնել ֆինանսական աջակցության. **դրամաշնորհ մինչև 2 մլն ՀՀ դրամ սահմաններում և վարկավորում** Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի գործընկեր րանկերի միջոցով հետևյալ պայմաններով.

- առավելագույնը 5 մլն դրամ,
- տարեկան տոկոսադրույքը՝ 10%,
- առավելագույնը 5 տարի մարման ժամկետով,
- Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից տրամադրվող երաշխավորություն (100%):

Գրանցվելու համար դիմել Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղ:

Հասցե՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Լազյան 35/9
հեռախոս՝ +374 322 2-13-70; +374 98 31-10-06
Էլ. փոստ՝ lori@smednc.am, loridnc@yahoo.com